ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 11.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2020/161

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Մ. Աղազարյանի (լիազորագիր տրված՝ 24.07.2020թ.)

Ա. Հակոբյանի (լիազորագիր տրված՝ 24.07.2020թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.07.2020թ. թիվ 26/26-1/10647-2020 գրությամբ «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 10.07.2020թ. թիվ 02/16.4/5186-2020 գրության հիման վրա, թիվ 16.07.2020թ. թիվ 26/26-1/10647-2020 գրությամբ նախաձեռնել է «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ»

ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն 24.07.2020թ. Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Սույն թվականի հուլիսի 22-ին ՀՀ ֆինանսների նախարարության ՍՑ-ՆԳ-2020/161 գրությամբ նախաձեռնվել է ընթացակարգ «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով, ինչի հետ կապված հայտնում եմ Ձեզ, որ 2020 թվականի հուլիսի 1-ին մասնակցել ենք ՀՀ Քաղաքաշինության կոմիտեի կողմից կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնանշման հարցմանը, այնուհետև 03.07.2020թ. 2-2 արձանագրությամբ մեզ ծանուցել են, որ հայտում բացակայում է 1.1 հավելվածը և առաջարկվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստին ներկայացնել հրավերով նախատեսված շտկված փաստաթղթերը, ինչը մեր կողմից կատարվել է՝ սահմանված ժամկետում, որից հետո 07.07.2020թ.-ի թիվ 2-3 արձանագրության 1.3-րդ կետով մերժել է մեր ընկերության հայտը, քանի որ չի ներկայացրվել սպասարկման կենտրոնի հասցեն:

Հարգելի պարոն Ներսիսյան, վերոգրյալից պարզ է դառնում, որ մեր ընկերությունը կատարել է Գնումների մասին օրենքի և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի 526-Ն որոշման պահանջները, այն է՝ մեկ աշխատանքային օրում շտկել է թույլ տրված սխալը և ներկայացրել է Հավելված 1.1-ը, որը պարունակել է գնման ենթակա ապրանքի մանրամասն նկարագրությունը, սակայն պատվիրատուն մատնանշել է, որ մասնակիցը չի ներկայացրել սպասարկման կենտրոնի հասցեն և այդ հիմքով մերժել է մեր հայտը, այն դեպքում, երբ գնման առարկա է հանդիսանում կոնկրետ ապրանք, որը ունի կոնկրետ տեխնիկական բնութագիր և սպասարկման հասցեի չնշելը ոչ մի կերպ չի ազդում տվյալ ապրանքի որակական հատկությունների վրա, հիշեցնեմ, որ գնման առարկան օդորակիչ է, որը տեղադրվում է պատվիրատուի նշված հասցեում և ըստ էության տվյալ ապրանքի սպասարկումը ևս կատարվում է պատվիրատուի գտնվելու վայրում, բացի այդ մեր

ընկերությունը Հավելված 1-ում նշել է նաև իր հասցեն և հեռախոսահամարը, որը միաժամանակ հանդիսանում է ընկերության տեղակայման վայրը և այնտեղ է կատարվում նաև ցանկացած աշխատանք կապված ընկերության գործունեության հետ:

Մենք պատվիրատուի ներկայացուցչի հետ հեռախոսազրույցում ներկայացրել ենք այս ամենը, ասել ենք, որ սպասարկման հասցե չնշելը բացարձակ նշանակություն չունի մատակարարվող ապրանքի որակական հատկանիշների հետ, հայտում կա նշված հասցե, սակայն նրանց կողմից դա համարվել է անբավարար և հարուցվել է սույն վարույթը, որի հիմքերը մտացածին են և հակասում են տրամաբանությանը և օրենքին:

Հարգելի պարոն Ներսիսյան, «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն՝ 2018թ.-ից մասնակցում է պետության կարիքների համար գնվող ապրանքների և ծառայությունների գնման գործընթացներին և միշտ մեծ պատասխանատվությամբ և սրտացավորեն կատարել է պարտավորությունները, իսկ այս ընթացակարգը ըստ էության քննում է մասնակցի՝ այսինքն մեր վարքագիծը կոնկրետ գնման գործընթացի մասով, որտեղ մեր կողմից ևս թույլ չի տրվել գնումների մասին օրենքով նախատեսված ընթացակարգերի խախտում, այլ հանձնաժողովի կողմից նորմերի կամայական մեկնաբանման արդյունքում հայտնվել է այս իրավիճակում, այս պարագայում ճիշտը կլիներ մեր կողմից բողոքարկել հանձնաժողովի գործունեությունը, սակայն եղանակային պայմաններով պայմանավորված, երբ շոգ եղանակներ են հաստատվել, որը մեր մասնագիտական ոլորտի հետ ունի անմիջական կապ, զուտ զբաղվածության պատճառով մեկ օրվա տարբերությամբ մենք չհասցրեցինք բողոք ներկայացնեինք բողոք քննող անձին և հիմա արդեն նախաձեռնվել է սույն ընթացակարգը, ինչը մեզ փաստի առաջ է կանգնեցրել, երբ, որ մենք ստիպված ենք միջոցներ ձեռնարկելու, որպեսզի չհայտնվենք սև ցուցակում:

Ցանկանում եմ հայտնել նաև, որ «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ում աշխատում է տաս հոգուց ավել մարդ և մեր պատվիրատուների 50-60 տոկոսը պետությունն է՝ համապատասխան գնման գործընթացներով, իսկ սև ցուցակում հայտնվելու պատճառով մեծ մասը կկորցնի կամ աշխատանքը, կամ եկամուտի զգալի մասը, փաստացի հանձնաժողովի ոչ ճիշտ քայլերի արդյունքում խոչնդոտվում է նաև մեր գործունեությունը և խաթարվում է արդարության և ազատ մրցակցության սկզբունքը»:

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից նախաձեռնված՝ 22.07.2020թ. ՍՑ-ՆԳ-2020/161 ընթացակարգով՝ «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին, գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնած ընթացակարգը մերժել:

«ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/161 ընթացակարգի շրջանակներում 30.07.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են, վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 10.07.2020թ. թիվ 02/16.4/5186-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«2020 թվականի հունիսի 23-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար չափաբաժիններով կազմակերպված ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով վարչական սարքավորումների ձեռքբերման գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասնակից «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (հավելված 1.1):

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ վերը նշված մասնակցին ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունները:

Սահմանված ժամկետում «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1.1-ը լրացված է եղել ոչ ամբողջական:

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը և Կարգի 45-րդ կետը՝ կից ներկայացնում եմ վերը նշված մասնակցի տվյալները»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/161 ընթացակարգի շրջանակներում 30.07.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2020/161 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2020/161 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից իր կարիքների համար հայտարարվել է ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.07.2020թ. նիստի թիվ 2-3 արձանագրության համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.07.2020թ. թիվ 26/26-1/10647-2020 գրությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 10.07.2020թ. թիվ 02/16.4/5186-2020 գրությունը՝ կից փաստաթղթերով, «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի 24.07.2020թ. դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. ***<u>խախտել է</u>*** պայմանագրով նախատեսված կամ ***<u>գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից</u>*** պայմանագրի միակողմանի լուծմանը կամ ***<u>գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,</u>***

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***<u>հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:</u>***

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ***<u>մասնակիցը հայտով ներկայացնում է</u>*** ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ ***<u>հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):</u>***

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանվում է, որ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար

գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված ապրանքի ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «դ» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից հայտարարվել է ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.07.2020թ. նիստի թիվ 2-2 արձանագրությամբ արձանագրվել է, որ Ընկերության կողմից չի ներկայացվել առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված 1.1):

Նույն արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետը, կասեցրել է նիստը մեկ աշխատանքային օրով, իսկ հանձնաժողովի քարտուղարը ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 07.07.2020թ. նիստի թիվ 2-3 արձանագրությամբ արձանագրել է, որ Ընկերության կողմից չի ներկայացվել հրավերով սահմանված սպասարկման կենտրոնի հասցեն, որի հիման վրա Կարգի 42-րդ կետի համաձայն մերժել է վերջինիս հայտը:

Ուսումնասիրելով ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիրը 1-ին չափաբաժնի մասով, ինչպես նաև Ընկերության կողմից ներկայացված հավելված 1.1-ը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով ընթացակարգով իրականացված գործողությունները արձանագրում եմ, որ Պատվիրատուն 03.07.2020թ. ծանուցել է Ընկերությանը՝ առաջարկելով մինչև Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, այնուհետև՝ 07.07.2020թ. նիստի թիվ 2-3 արձանագրությամբ Ընկերության կողմից հրավերով սահմանված սպասարկման կենտրոնի հասցեն չնշելու հիմնավորմամբ՝ հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետը, մերժել է վերջինիս հայտը:

Անդրադառնալով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված այն անհամապատասխանությանը, որ Ընկերության կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում չի նշվել Ընթացակարգի հրավերով սահմանված սպասարկման կենտրոնի հասցեն, որը հիմք է հանդիսացել վերջինիս հայտը մերժելու համար, ապա սույն մասով արձանագրում եմ հետևյալը.

Կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի զ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է*** ապրանքների գնման դեպքում իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ ***հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):***

Ընթացակարգի հրավերի 4.3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանվում, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից առաջարկվող ապրանքի*** տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև ***առաջարկվող ապրանքի ապրանքային նշանը, ֆիրմային անվանումը, մակնիշը և արտադրողի անվանումը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):***

Սակայն Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով, որպես լրացուցիչ պահանջ սահմանվել է, որ մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը պարտադիր պետք է ներառի նաև տեղեկատվություն սպասարկման կենտրոնի հասցեի վերաբերյալ:

ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել թվով 8 մասնակից, որոնցից 4-ը հայտի 1.1 հավելվածում չեն նշել Ընթացակարգի հրավերով սահմանված սպասարկման կենտրոնի հասցեն:

Այս տեսանկյունից հարկ եմ համարում արձանագրել, որ Ընթացակարգի հրավերով նախատեսված սույն պահանջը հստակ սահմանված չէ, որն առաջացրել է մասնակիցների մոտ տարընկալում, ինչի արդյունքն է հենց Ընթացակարգին հայտ ներկայացրած մասնակիցներից 4-ի սպասարկման կենտրոնի հասցեի չնշելը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ նման պայմաններում հնարավոր չէ արձանագրել «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ի կողմից ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-20/5 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտման փաստը, ուստի գտնում եմ, որ նման պայմաններում առկա չեն վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 16.07.2020թ. թիվ 26/26-1/10647-2020 գրությամբ «ԷՅՉ ՎԻ ԷՅ ՍԻ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**